

Ի՞նչ գեղեցիկ բառեր ունէր ազատութեան քուրմին համար: Տեսէք թէ ի՛նչպէս կ'արտա-
յայտուէր այն հեռաւոր օրերուն մէջ (80-ական
թուականներուն), պատասխանելով իր յետա-
դէմ հակառակորդներուն. «Փա՛ռք այն երկիր-
ներուն, ուր կը խօսին: Ամօ՛թ այն երկիրնե-
ներուն, ուր կը լռեն: Եթէ դուք պարլամենտա-
րիզմի անուան տակ ազատ վիճարանութեան
ոէժիմը կը կարծէք խարանել, լաւ գիտցէք, որ
ատով կը բռնանաք նոյն իրեն Հանրապետու-
թեան վրայ»...

Ուրիշ անգամ մը այսպէս կ'որոտար խղճի
ազատութեան հակառակորդներուն դէմ.

«Կը համարձակին ըսել, թէ հանրապետա-
կանները հալածող են, երբ անոնք կը պահան-
ջեն մտքերու, հոգիներու ազատագրում եւ
կ'ուզեն իրականացնել ատոր համար անհրա-
ժեշտ եղած պայմանները: Խղճի ազատութիւ-
նը հիմնական սկզբունքն է հանրապետական
կուսակցութեան: Մեր փառք ու պարծանքն է՝
ազատագրել նոյնիսկ զանոնք, որոնք մեզի
կ'անիծեն»...

Եւ դարձեալ.

«Ազատութիւն մենք կը պահանջենք ոչ մի-
այն մեզի, հանրապետականներու համար,
այլ եւ մեր հակառակորդներու, ամենուն հա-
մար»:

1789-92-ի տխրանքներու հոգին էր, որ կը
բարբառէր ազատախօս Կլէմանտի բերնով...
Հայրենիքը այլեւս անբաժանելի էր Հանրա-
պետութենէն, եւ հայրենասիրութեան հաւա-
տամբը՝ ամուր շողկապուած ազատութեան ու
արդարութեան նշանաբաններուն հետ: «Ֆրանսա»
բառը հոմանիչ է այդ չքնաղ բառերուն:
Ֆրանսա այլեւս անխմատ է, աներեւակայելի
առանց ազատութեան ու մարդկայնութեան
հաւատամքներուն...

Այդպէս կը խորհէր Կլէմանտ: Այդպէս կը
խորհէր Երրորդ Հանրապետութեան հիմնադիր
կուսակցութիւնը. — Դէմոկրատները: Եւ ա-
նոնց հետ՝ ընկերվարական կուսակցութիւնը,
որ տակաւին ստուեր մըն էր այն օրերուն:

Ֆրանսայի աշխարհիկ եւ դեմոկրատիկ
վերանորոգումը հետապնդելով միաժամանակ,
«Վագրը» յար եւ միշտ կը սնուցանէր իր հո-
գիին մէջ հայրենիքի «սիրտ-վրէժին» գաղա-

փարը: Նա համոզուած էր, որ Ֆրանսան օր մը
պիտի բուժէր Ֆրանս-գերման պատերազմի
հետեւանքով բացուած վէրքերը... Այդ մա-
սին, սակայն, շատ չէր խօսեր, համաձայն
Գամբետտայի իմաստուն հրահանգին. «Pen-
son y, n'en parlons pas...» («Պորհինք անոր
մասին, բայց չխօսինք»):

Իրաւ է, Կլէմանտ կուրօրէն հնազանդողը
չէր անգամ ամենէն հեղինակաւոր պատգամնե-
րուն: Եւ օր մը ըսաւ ճառի մը մէջ.

«Մենք պարտուած ենք, բայց չենք համա-
կերպած: Ողջերը կը մնան հաւտարիմ մե-
ռածներուն: Մենք դեռ բան մը ունինք ըսելու
եւ ընելու աշխարհի մէջ»...

Մարգարէական բառեր...

* * *

Անխոնջ ու յանդուզն պայքարողը միշտ
յաջող ու բախտաւոր չեղաւ: Ըմբիշը երբեմն
ալ կը ձախողի եւ կ'իյնայ հարուածներուն
տակ: 1893-ի ընտրութիւններուն Կլէմանտ
տապալեցաւ: «Վագրը» մէկէն ի մէկ դուրս
նետուեցաւ ազգային Պորհրդարանէն, պար-
լամենտական յուզումնալից բախումներու կըր-
կէսէն: Արտաոռոց անակնկալ մըն էր... Նման
արկածի մը ենթարկուեցաւ հետադային Եր-
րորդ Հանրապետութեան միւս խոշոր ու տիրա-
կան դէմքը — Ժան Ժոնէս: Տարօրինակ կեր-
պարանք մը ունէր Ֆրանսական Պորհրդարանը
առանց իր մեծագոյն հոետորին: Եւ երբ օր մը,
Վիվիանիի նշանաւոր ճառի մը ընթացքին, ըն-
կերվարական պարագլուխը մէկէն ի մէկ երե-
ւան եկաւ վերի թրիբունին հանդիսականներու
բազմութեան մէջ, տեսարանը այնքան խորթ
էր եւ այնքան տխուր, ընդվզեցուցիչ, որ ամ-
բողջ պարլամենտական ձախակողմը, հարիւ-
րաւոր երեսփոխաններ, ընկերվար, արմատա-
կան կամ պարզ հանրապետական, ոտքի ելան
եւ «կեցցէ՛ ժոռէս» աղաղակներով թնդացու-
ցին սրահը...

Պորթ ու ընդվզեցուցիչ երեւոյթ մըն էր
նաեւ Կլէմանտի վտարումը Պորհրդարանէն
... Վտարեր էին բոլոր յետադէմ հակառա-
կորդները, զինակցելով եւ տիրանալով ժողո-
վրդական քուէներուն:

Մակայն, յետադէմ բանակը — կղերա-
կաններ, արքայականներ, ամէն կարգի պահ-